

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՍՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

1. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քերականական ամեն մի ժամանակաձև ունի իր հարաբերականորեն կայուն իմաստը: Հայերեն իմացող յուրաքանչյուր անձնավորություն կոնտեքստից դուրս էլ կհասկանա գրեցի, գրում եմ, գրելու եմ ձևերի իմաստները: Սակայն, վերջին հաշվով, ժամանակների յուրահատկությունները բացահայտվում են գործածության մեջ: Եթե կոնտեքստում չեն փոխվում քերականական ժամանակաձևերի բուն իմաստները, ուրեմն գործ ունենք ժամանակների բուն կամ հիմնական կիրառությունների հետ: Իսկ երբ չեն համընկնում տվյալ ժամանակաձևի բուն ու կոնտեքստից բխող իմաստները, այդ դեպքում արդեն գործ ունենք քերականական ժամանակների երկրորդական կիրառությունների հետ: Գրաբարի քերականական ժամանակների համակարգի լքննության ընթացքում առավել ուշադրություն կդարձնենք հատկապես պարզ ժամանակների երկրորդական կիրառությանը:

Ներկա ժամանակ— Գրաբարում երբեմն ներկա ժամանակով արտահայտվում են անցյալում կատարված գործողությունները, այլ կերպ ասած ներկան հանդես է գալիս անցյալ ժամանակի իմաստով. օրինակ՝ «Եւ տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր հայր կոչէր և յաւագաց գումարեն ընդ նմա զիշխանն Գարմանաց ձորոյն և առնեն ընդ նոսա այլ տասն նախարարս և յուղարկեցին զնա մեծաշուք պատուով... Անդ ձեռնադրեն զՇահակն ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց և պատուով դառնան առ թագաւորն» (Բուզ., գ. 3, Ժէ, էջ 70):

Ընդգծված բայերով արտահայտված գործողությունները թեև արտահայտված են ներկա ժամանակով, բայց վերաբերում են անցյալին և լեզվաբանության մեջ ընդունված է անվանել պատմական ներկա:

Ամեն առիթով և ամեն բնույթի գործերում հնարավոր չէ պատմական ներկայի գործածությունը: Երբ հեղինակը (պատմողը) խոսում է հենց նոր ավարտված որևէ իրադարձության մասին օգտագործելով ներկա ժամանակ, բնավ էլ այն պատմական ներկա չէ: Վերջինս անպայման ենթադրում է որոշ ժամանակահատվածի առկայություն, գործողությունը տեղի ունենալու ժամանակից մինչև խոսողի կողմից այդ գործողությունը ներկայացնելու պահը:

Պատմական ներկան պատմությանը ավելի աշխուժություն, զգացմունքայնություն է հաղորդում: Պատահական չէ, որ Նսպերսենը այն բնորոշ է համարում ժողովրդական-խոսակցական լեզվին¹:

Աշխարհաբարի համեմատությամբ, գրաբարում պատմական ներկան ավելի քիչ է կիրառվում: Դասական շրջանում այդ գործառությամբ հանդես են գալիս հիմնականում շարժում ցույց տվող և ասացական բայերը:

¹ О. Есперсен, Философия грамматики, М., 1958, стр. 301.

Այսպես, Հովհաննու ավետարանի 25 պատմական ներկաներից 8-ը «գամ» բայով է, 2-ը՝ «ընթանամ», Մաթևոսի և Մարկոսի ավետարաններում «գամը» այդ կիրառությամբ գործածված է համապատասխանաբար՝ 7 և 21 անգամ: Ասացական բայերից շատ է գործածվում հատկապես «ասեմ» բայը:

Հին հունարենի համեմատությամբ, գրաբարում պատմական ներկան դարձյալ ավելի քիչ է օգտագործվում: Մարկոսի ավետարանում (հունարեն) օգտագործված է 151, հայերենում՝ 33, Հովհաննիսի մոտ համապատասխանաբար՝ 162 և 25 անգամ: Դասական գրաբարում պատմական ներկան թեև առկա, բայց տարածված երևույթ չէ:

Գրաբարում շատ հաճախ ներկան հանդես է գալիս ապառնու իմաստով. կարելի է առանձնացնել նշված գործառության հետևյալ դեպքերը:

Երբ բայերից մեկը (մեծ մասամբ նախընթաց բայը) դրվում է առաջին ապառնիով, մյուսը՝ ներկայով. «Եթե չշմարիտն ոք քննիցէ զիրոսն, գտանէ անհնարին վտանգս» (Եղ., էջ 31): «Բայց եթե զարիւն ոք ըմպիցէ սատակի» (Ն. տ., էջ 61): «Եթէ վերին վայրացն ունիցի ծանրութիւն ինչ ի վերջավայրս երկրիս զայ ճասանէ» (Բրու., Ա, էջ 19):

Նախադասության մեջ կարող է լինել նաև երկրորդ կամ բաղադրյալ ապառնիով արտահայտված որևէ բայ, որը դարձյալ հուշում է, որ նույն նախադասության մեջ ներկայի ժամանակաձևով դրված բայը ապառնու իմաստ ունի. «Դու ի մեր կոյս լինիս, գիտեմք զի մեր լինելոց է յաղթութիւն» (Բուղ., գ. 3, էջ 20): «Եթէ ոչ աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա, դու կտռնչիս և աշխարհս Հայոց» (Ն. տ., էջ 198):

Ներկայի ապառնու իմաստով կիրառության օրինակները այնքան բազմաթիվ են, որ որոշ քերականներ այդ կիրառությունը համարում են գրաբարի ներկա ժամանակի բնորոշ հատկանիշներից մեկը: Իսկ Այտընյանը տալիս է այդ գործածության ծագման բացատրությունը. «Այս գործածութեան դիրին է ծագումը գուշակել: Քսենի որ բուն հին ժամանակները հատուկ ստորադասական անկատար չունէր լեզուն, այլ շատ անգամ սահմանական անկատարը անոր պաշտոնն ալ կկատարէր, քանի որ կըսուէր թող ինքն երթայր և առնոյր, այս սահմանականը քնականապես և անզգալաբար կառաջնորդէր այս սահմանականին և ըսէլ կուտար նոյն կերպով՝ թող ինքն երթայ և առնու, փոխանակ՝ թող ինքն երթիցէ և առցէ ըսելու»²:

Հնդեվրոպական մի շարք լեզուներում նույնպես ներկան հանդես է գալիս ապառնի ժամանակի իմաստով: «Գերմանացիները, — ինչպես նշում է Վանդրիեսը, — խոսակցական լեզվում շատ հաճախ ներկան օգտագործում են ապառնու փոխարեն: Դա լեզվի ընդհանուր տենդենցն է ներկան կիրառել ապառնու գործառությամբ»³:

Հին սլավոններենում ևս ներկան և ապառնին տարբերակված չէին:

Ռուսերենում ավելի հաճախ նշված կիրառությամբ հանդես են գալիս տարածության մեջ տեղափոխություն ցույց տվող բայերը՝ գնում եմ, մեկնում եմ, վեր եմ կենում և այլն, ինչպես նաև ճաշում եմ, ծխում եմ, հանդիպում եմ բայերը⁴:

² Ա. Այտընյան, Քնական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 74:

³ Вандриес, Язык, М., 1937, стр. 101.

⁴ А. В. Бондарко, Вид и время русского глагола, М., 1971, стр. 155.

Հետևաբար, գրաբարի ներկայի այս կիրառության վերաբերյալ Այտընյանի դիտողությունը՝ հարցի մասնակի բացատրությունն է, երևույթի դրսևորման պատճառներից մեկը:

Ներկայի նշված կիրառությունը Այտընյանը համարում է ժողովրդական-խոսակցական լեզվին բնորոշ երևույթ՝ Գուցե և այդպես է: Բոլոր դեպքերում, բազմաթիվ, ոչ պատահական օրինակները, հիմք են տալիս եզրակացնելու, որ ներկայի ապառնու իմաստով կիրառությունը դասական գրաբարի ոճական առանձնահատկություններից մեկն է:

Գրաբարի քերականների մեծ մասը (եթե ոչ բոլորը) նշում են միայն ներկայի՝ առաջին ապառնու իմաստով գործառությունը: Անտիստելի է, որ իրոք դասական գրաբարում ներկան կողք-կողքի հանդես է գալիս առաջին ապառնու հետ, ունենալով ապառնու իմաստ: Բայց անվերապահորեն ընդունել, որ ներկան փոխարինում է միայն առաջին ապառնուն ճիշտ չէ, որովհետև՝

ա) Երբեմն ներկան ու երկրորդ ապառնին են հանդես գալիս կողք-կողքի. ինչպես՝ «Ո՛ղ ոք լիցի մեր հովիվ, բայց ի դման է և ոչ ոք նստի յայնմ աթոռ բայց գա» (Բուդ., էջ 107): «Նշիա գայ և նաստատեսցէ զամենայն» (Մտթ., Ժէ, 11): «Զի եթէ քննեսցէ ոք զգիրս... դասառածեղեն յաճախութիւն հոգեւոր պատգամացն գտանէ ոք» (Բուդ., էջ 133):

Ընդգծված բայերն ունեն ապառնու իմաստ:

բ) Կիրառվելով ապառնի ժամանակի փոխարեն, սահմանական եղանակի ներկան հանդես է գալիս հիմնականում արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիների իմաստով: Իսկ այս իմաստներն արտահայտում են առաջին և երկրորդ ապառնիները:

Քանի որ տվյալ դեպքում գրիցեմ և գրեցիք ձեները իմաստային-գործառական համանիշներ են, ուրեմն ներկան հանդես է գալիս ոչ թե գրիցեմի կամ էլ գրեցիքի, այլ ապառնու փոխարեն ընդհանրապես:

Դասական գրաբարում սահմանական եղանակի ներկան հրամայական եղանակի իմաստով չի գործածվում:

Անցյալ անկատար — Գրաբարում անցյալ անկատարը գործառում է նաև որպես այսպես կոչված ստորադասական անկատար՝ արտահայտելով արդի հայերենի ըղձական, պայմանական եղանակների անցյալ ապառնիների իմաստ:

Սահմանական անկատարի նշված կիրառությանը հաճախ հանդիպում ենք՝

ա) Եթե — ապա կառուցվածքի բարդ նախադասության մեջ. օրինակ՝ «Եթե ոչ ձիւն և սառնամանիք պնդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին և եթե ոչ սոթ ջեռուցանէր, պտուղք, ոչ հասանէին» (Եզն., էջ 70): «Եւ եթէ արդարեւ առիւծն էր պատճառ ծննդեան թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր» (Ն. տ., էջ 160):

բ) Թող, երանի բառերի հետ. «Թող ինքն նախ երթայր և առնայր զթագաւորութիւն և ոչ Արհմենայ, որ ոչ զխորհուրդն հօրն գիտէր» (Եզն., էջ 135): «Գոշթաղդ ասէ երանի թե շնչաւոր և կենդանի ինչ արարածոց տայիւր երկիր պագանել» (Վկայք., էջ 124):

Անկատարի նշված գործառությունը կարելի է համարել նաև որպես նրա բուն կիրառություն, քանի որ գրաբարը «ստորադասական» անկատարի հա-

տուկ ձև շունի: Վերջինիս իմաստն արտահայտվում է այլ քերականական ժամանակների միջոցով:

Ինչպես գիտենք, դասական գրաբարում դերբայների առատ գործածություն չկա. դիմավոր բայաձևերը (այդ թվում և անցյալ անկատարը) հաճախ փոխարինում են դերբայներին. օրինակ՝ «Որ ելանէին և մտանէին, զարմանալին ընդ ատարոտի իրսն զոր տեսանէին» (Վրբ., էջ 121): Մատուցեալ մերձեցաւ ի դագազսն եւ որ բարձեալն աանէին զտեղի առին» (Ղուկ., Ա, 65):

Արդի հայերենի վաղակատար, հարակատար դերբայների (և ժամանակների) իմաստով շատ հաճախ հանդես է դալիս նստիմ բայը:

«Եւ մինչդեռ երանելի ծերն նստէր ի խցին իւրում, մօղուկ մի ի սրունն նստաւ» (Վարբ., էջ 90): «Գան առ Յիսուս եւ տեսանեն զդիւահարն, զի նստէր զգեցեալ» (Մարկ., Ե, 15):

գ) Անցյալ անկատարը հանդես է գալիս նաև անցյալ կատարյալի փոխարեն. բոլոր լեզուներում անկատարի բուն կիրառության հիմնական ոլորտը՝ անցյալում սկսված ու անավարտ գործողության, իսկ կատարյալինը՝ ավարտված գործողության մատնանշումն է: Այլ կերպ ասած, այդ երկու ժամանակների հիմնական հակադրությունը կերպային է: Դասական գրաբարում սովորական երևույթ է, երբ անկատարը կորցնելով իր հիմնական կերպային հատկանիշը, մատնանշում է այնպիսի գործողություն, որը կատարվել, ավարտվել է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժողովրդական ավանդություններում, բանահյուսության մեջ ավելի շատ, գործ է ծածկում անկատար ժամանակը: Վ. Առաքելյանը Վահագնի երկի կապակցությամբ գրում է. «Բոլոր բայերը գործ են ծածկած անցյալ անկատար ժամանակով, պատմական անցյալը գրաբարում մեծ մասամբ անցյալ անկատարով է»⁶:

Բուղանդի պատմության «Երգ տուփանացն Տիրիթայ» հատվածում, որը Ակինյանը համարում է նախագրային բանավոր ստեղծագործություն⁷, 39 անգամ հանդիպում ենք կատարյալի, 35 անգամ՝ անկատարի:

Նման դեպքերում անկատարի օգտագործումը նկարագրությունը ավելի կենսունակ է դարձնում, ավելի ակնադու է երևում ժողովրդական խոսքը:

Հանդես գալով որպես պատմական ժամանակ, գրաբարյան անկատարը կատարում է աշխարհաբարի պատմական ներկայի գործառություն. օրինակ՝ «Առեալ այնուհետեւ երանելոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարդ և յանդարման տեղիս Գողթան» (Կորյ., էջ 44): «Եսկ Հարելն զայն լուեալ փութանակի հասանէր առ Դանիելն և նախ ինքն տեղեկանայր և ապա առաքէր առ արքայն յերկիրն Հայոց» (Ն. տ.):

Միևնույն նախադասության մեջ հանդիպում ենք և՛ ներկայի և՛ անկատարի՝ երկուսն էլ որպես պատմական ժամանակ. «Դայ առ նա բորոտ մի աղաչէր ի ծունր իջանէր և ասէր» (Մարկ., Ա, 40): «Եւ սակաւ սակաւ յառաջ մատուցեալ հասանէ ի լեառն մի ապառաժ և գտանէ անդ քարայր մի... և ի ներքս մտանէր» (Վրբ., էջ 5):

Թարգմանելու դեպքում ընդգծված բայերը պետք է դնել կամ ներկայով, կամ անցյալ կատարյալով: Եթե հաշվի առնենք, որ պատմական ներկայով

⁶ Վ. Առաքելյան, Գրաբարի հատընտիր, Երևան, 1946, էջ 17:

⁷ «Հանդես ամսօրյա», 1924, № 2, էջ 18:

(նաև անկատարով) արտահայտված գործողությունները՝ ավարտված գործողություններ են, նշանակում է վերոգրյալ և նման բնույթի բազմաթիվ օրինակներում գործ ունենք անկատարի՝ կատարյալի իմաստով կիրառության հետ:

Անկատարով կարող են արտահայտվել նաև մի անգամ կատարված, ավարտված գործողությունները. «Զայն լուեալ Մահմեայ գիւի վաղվադակի առ Ուրմիզգ հասանէր» (Եղն., էջ 139): «Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ բաղաքին և հրաժարեալ ի նոցանէ... բերէր առ յեպիսկոպոսն Ասորոց» (Կորյ., էջ 50):

Ինչպես գիտենք, նման գործողությունների արտահայտման հիմնական միջոցը անցյալ կատարյալն է:

Գրաբարի անկատարի այդ յուրահատկությունը փորձել է մեկնաբանել ակնավոր հայագետ Ա. Մեյնե. Նդիշեից քաղված՝ «Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարգան և տեսանէր» նախադասության մեջ կատարյալի և անկատարի կողք-կողքի գործածությունը նա բացատրում է հետևյալ կերպ. «Տեսնելու գործողությունը զարգանում է, մինչդեռ հայացք նետելու (իմա՝ վեր հայեցավ— ի. Ն.) ավարտվածությունը որոշակիորեն արտահայտված է»⁸:

Այս բացատրությունը մեզ անհամոզիչ է թվում: Կարելի է բազմաթիվ փաստեր բերել հակառակը ապացուցելու համար: Բերենք միայն մեկ օրինակ. «Ապա նայեցաւ թագաւորն Վաղէս ընդ եպիսկոպոսն և ետես զի քրտնեալ էր» (Բուղ., գ. 4, էջ 153):

Ոչ մի տարբերություն, թվում է, չկա հայեցաւ և տեսանէր (Մեյնի օրինակում) և նայեցաւ և ետեսիւի միջև, բայց տեսանիմ բայը մեկ կատարյալով է դրված մեկ՝ անկատարով:

Ուրեմն հարկ չկա կատարյալի և անկատարի զուգահեռ գործածության համար այլևայլ պատճառներ փնտրել: Այդ պատճառը մեկն է: Անցյալ անկատարը գրաբարում հանդես է գալիս նաև անցյալ կատարյալի իմաստով:

Անցյալ կատարյալ և վաղակատար— Այս երկու ժամանակների երկրորդական կիրառության ոլորտները բավական սահմանափակ են: Անցյալ կատարյալը կարող է արտահայտել ապառնի (երբեմն նաև ներկա) ժամանակի իմաստ, օրինակ՝ «Այլ յայսոսիկ են դատաստանք իւրաքանչիւր ուրուք, եթէ զհաւատսն պահեաց և զպատուիրանսն մտադրութեամբ ընկալաւ» (Վրբ., էջ 31): «Եթէ զնաց (իմա փնացէ— ի. Ն.) սիրտ իմ զհետ կնոջ առն, եթէ դարանակալ եղէ առ դրունս տան նորա, ապա լիցի հաճոյ եւ իմ կին այլում և մանկունք իմ տառապեսցին» (Յոր., ԻԱ, 9—10):

Այս օրինակներում անցյալ կատարյալը արտահայտում է ըղձական ապառնու իմաստ:

Նկատելի է, որ անցյալ կատարյալի ժամանակաձևով ապառնություն արտահայտող բայերը երկրորդական նախադասության մեջ ունենում են ըղձական (այդպես է վերը բերված բոլոր օրինակները), իսկ գլխավոր նախադասության մեջ՝ արդի հայերենի պայմանական եղանակի ապառնու իմաստ. օրինակ՝ «Եթէ դարձցիս և խոնարհեցուցես զանձն քո առաջին տեառն, հեռի առաքեւ ի յարկէ քումմէ զանիրաւութիւն» (Յոր., ԻԲ, 23): «Որ զբանն իմ լսէ և հաւատայ յայնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յավիտենականս եւ դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս» (Յովհ., Ե, 24):

⁸ Meillet, Recherche sur la syntaxe comparée de l'arménien, Vienne, 1903, p. 16.

Վերջին օրինակում փոխեցաւ կարելի է գիտել որպէս ներկայի իմաստով գործառութիւն (աշխարհաբար թարգմանութեան մեջ այն գրված է ներկայով)⁹, բայց այդ ներկան սոսկ խոսքի պահը չի ներառում, այլ հավաստում է գործողութեան հնարավորութիւնը նաև ապագայի համար, այլ կերպ ասած փոխեցաւ ենթադրում է նաև ապառնիկութիւն:

Բոլոր դեպքերում, դասական գրաբարում անցյալ կատարյալի՝ ապառնու և ներկայի իմաստով գործածութիւնը բավական սահմանափակ է: Այդպես է նաև արդի հայ գրական լեզվում:

Կատարյալի այդ գործածութիւնը ժողովրդական խոսքի ձև է և արտահայտում է անկասկածութիւն, համոզվածութիւն, գործողութիւնը դիտում է իբրև հաստատուն իրողութիւն, որը վրա կհասնի անմիջապէս, առանց հապաղելու:

Վաղակատար ժամանակի երկրորդական կիրառութեան մասին խոսելու հարկ չկա, որովհետև դասական գրաբարում վաղակատարը սահմանափակ կիրառութիւն ունի: Նշենք միայն, որ վաղակատարը իր գործառական յուրահատկութիւններով մասամբ տարբերվում է արդի հայերենի համանուն ժամանակից:

Արդի հայերենի անցյալ կատարյալ և վաղակատար ժամանակների յուրահատկութիւնների մասին Ս. Աբրահամյանը գրում է. «Գնացել է և գնաց ձևերի հակադրութեան մեջ գնաց-ը նշում է գործողութեան կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապէս առաջ, կամ մտածվելը որպէս այդպիսին... խոսելու պահին անմիջապէս նախորդող կամ համեմայն դեպս համեմատաբար մոտ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցութիւնները (հենց նոր, այս պահին և այլն) գործածվում են անցյալ կատարյալի հետ, իսկ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցութիւնները (վաղուց, շատ առաջ, առաջ և այլն)՝ վաղակատար ժամանակի հետ»¹⁰:

Գրաբարում վաղակատարի և կատարյալի իմաստային այդ հակադրութիւնը չի գիտակցվում. «Մենք ի վաղուց հետե գիտացա՛մ գեկեալ փրկութիւն աշխարհի» (Վրբ., էջ 8): «Ի վաղուց հետե իմացա զքեզ, եղբայր իմ, եթէ ի տեղիս յայտոսիկ բնական ևս զոր և խոստացաւ ինձ Քրիստոս ածել ի ծանոթութիւն»: Այս օրինակներում, ի տարբերութիւն աշխարհաբարի, համեմատաբար վաղ ժամանակ ցույց տվող բառակապակցութիւնների հետ՝ (ի վաղուց հետե) գործածված է անցյալ կատարյալ: Նման օրինակները շատ են:

Ապառնի ժամանակ — Ապագայում կատարվելիք գործողութիւնները գրաբարում արտահայտվում են հիմնականում երեք քերականական ժամանակների միջոցով, որից երկուսը կազմութեամբ պարզ են (գրիցեմ, գրեցից), իսկ մեկը՝ բաղադրյալ՝ գրելոց եմ:

Դասական գրաբարում գրելոց եմ ձևը հանդես է գալիս միայն բուն կիրառութեամբ, բոլոր դեպքերում այն արտահայտում է միայն ու միայն ապառնիկութիւն:

Երկրորդական կիրառութեան խիստ սահմանափակ ոլորտներ ունի նաև երկրորդ ապառնին՝ (գրեցից): Որոշ ուսումնասիրողներ նշում են այդ ժամանակի գործածութիւնը ներկայի իմաստով: Ս. Ղազարյանը այդ առթիւ բերում

⁹ «Նոր կտակարան», էջմիածին, 1969, Ե, 24.

¹⁰ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականութիւն, Երևան, 1969, էջ 174.

է հետեւյալ օրինակները. «Որ յաճախէ զբանն իւր արհամարհեցցի» (Շատ խոսողը արհամարհւում է), «Որ արժանի գանի ինչ գործիցէ արքցէ գան»¹¹ և այլն: Պետք է ասել, որ նման օրինակները շատ քիչ են, մյուս կողմից էլ ընդգծված բայերը կարող են ունենալ հենց ապառնու իմաստ՝ (Շատ խոսողը կարհամարհվի, ծեծվելու արժանի բան կատարողը ծեծ կուտի և այլն), Այնպես որ հրատակորեն չի արտահայտված ներկա-ապառնի իմաստային հակադրությունը:

Առաջին ապառնին շատ հաճախ հանդես է գալիս ներկա ժամանակի իմաստով, հատկապես՝

ա) Հարցական նախադասություններում. «Փոխիցե՞ն աստեղք առ միմանս» (Բրսղ., 2, էջ 21); «Արդ ընդէ՞ր ոչ հանապազ ծնանիցին թագաւորք» (ն. տ., էջ 122); «Զի՞նչ է զոր դու գիտիցես և մենք ոչ գիտիցեմք» (Յոբ., ԺԵ, 9);

Այս կիրառությունը այնքան տարածված է, որ կարելի է դիտել որպես դասական գրաբարի ոճական առանձնահատկություն: Հստ կրկնված, Թ. Թոռնյանն էլ այդպես է համարում, դրելով՝ «Գրաբարի վայելչությունն է հարցական խոսքին բայը սահմանական ներկայի տեղ ստորադասական դնելը»¹²:

Ապառնու նշված կիրառությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հարցման դեպքում, ինչ-որ շահով վերանում են ապառնու (ոչ սահմանական) և սահմանական եղանակի ներկայի իմաստային տարբերությունները:

բ) Երբ գործողություն կատարողը համեմատվում է մի ուրիշի, կամ գործողությունը՝ մի այլ գործողության հետ. օրինակ՝ «Նման է մանկուոյ որ նրստիցին ի հրապարակս, կառղայցեն զընկերս իւրեանց և ասիցեն փողս հարաք ձեղ և ոչ կաքաւեցեք»... (Մտթ., ԺԱ, 16); «Որպես այլ մի գնացեալ ի տարաշխարհ, թողուցու զտուն իւր և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն և իւրաքանչիւր զգործ իւր և դռնապանին պատուէր տայցէ՝ զի արթուն լինիցի» (Մարկ., ԺԳ, 34);

դ) Շատ հաճախ եմ բայի առաջին ապառնու ժամանակաձևն է հանգես գալիս ներկայի փոխարեն. օրինակ՝ «Բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ» (Յովհ., ԻԱ, 4); «Տէր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու» (ն. տ., Դ, էջ 19); «Մի թէ բարբառ լու իցէ բախիւն լեզուի ընդ օդս» (Ագաթ., էջ 313);

Առաջին ապառնու բազմաթիվ և օրինաշափ գործածությունները ներկա ժամանակի փոխարեն հիմք են տալիս եզրակացնելու, որ դասական գրաբարում արդեն խախտված էին նշված ժամանակների կիրառության սահմանները, մանավանդ որ ներկան էլ, ինչպես տեսանք, կիրառվում է ապառնու փոխարեն:

Իրականում ապառնի-ներկա ժամանակային փոխանցումների հիմնական պատճառն այն է, որ դասական շրջանից արդեն առաջին ապառնին դադարել կամ թերեւս դադարում է բուն ստորադասական եղանակի ժամանակ լինելուց, քանի որ մթազնված էր նշված եղանակի էությունն իսկ: Կորցնելով իր հիմնական դերը, գրիցնմ ձևը սկսում է գործառել այլևայլ ժամանակների իմաստով (հենց այս հանդամանքն էլ պատճառ հանդիսացավ գրաբարից այդ ժամանակաձևի մյուսներից ավելի վաղ անհետանալուն: Նարեկացու, Դրասխանակերտցու, Հովհ. Մամիկոնյանի մոտ առաջին ապառնու շատ քիչ ենք հանդիպում):

Առաջին ապառնին կարող է արտահայտել նաև անցյալ ժամանակի իմաստ

¹¹ Ս. Ղ. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, էջ 407:

¹² Թ. Թոռնյան, Հնարք ընթերցում... հ. 1, Վիեննա, 1891, էջ 4:

(անկատար կամ կատարյալ)։ «Ով իցէ, որ սիրեաց զհիվանդութիւնն և ատեաց զառողջութիւնն» (Բուդ., էջ 130)։ «Որք ըստ արժանական սիրոյն իցեն տպաւորեալ աստուածական սիրոյն, զնոսա եղբայրս անուանեաց» (Ագաթ., էջ 437)։

Ապառնու այս կիրառութիւնը նախորդի համեմատ զգալիորեն սահմանափակ է։

Այսպիսով, ժամանակների երկրորդական կիրառութեան դեպքում նկատելի է, որ քերականական ժամանակը կորցնում է իր բուն կիրառութեան ընթացքում դրսևորվող որոշ հատկանիշներ (կերպային, եղանակային և այլն), ձեռք բերելով այն ժամանակի հատկանիշները, որի փոխարեն հանդես է գալիս։

Երկրորդական կիրառութեանը բնորոշ է զգացմունքայնութեան, հուզականութեան, արտահայտչականութեան դրսևորումը, բայց ոչ այն դեպքում, երբ երկու քերականական ժամանակներ հաճախակի են հանդես գալիս միմյանց փոխարեն։

Քերականական ժամանակները ժամանակային առանցքի վրա կայուն տեղ ունեն միայն բուն կիրառութեան դեպքում։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.—Ագաթանգեղայ պատմութիւն հայոց, Վենետիկ, 1882։

Բրսդ.—Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացոյ ճառք վասն վեցօրեայ արարութեան, Վենետիկ, 1830։

Բուդ.—Փատտոսի Բիւզանդացոյ պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912։

Եզն.—Եզնկայ վարդապետի Կողբացոյ եղծ աղանդոց, Վենետիկ, 1826։

Կորյ.—Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941։

Ղուկ.—Աւետարան ըստ Ղուկասու։

Մարկ.—Աւետարան ըստ Մարկոսի։

Մտթ.—Աւետարան ըստ Մատթէոսի։

Յոր.—Գիրք Յորայ։

Յովհ.—Աւետարան ըստ Յովհաննու։

Վկայք.—Արրահամու խոստովանողի վկայք Արեւելից, էջմիածին, 1921։

Վրք.—Վարք սրբոյ հարանց, Վենետիկ, 1855։

Ն. տ.—Նույն տեղում։

ВТОРОСТЕПЕННЫЕ УПОТРЕБЛЕНИЯ ГЛАГОЛЬНЫХ ВРЕМЕН В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Л. Ш. ОГАНЕСЯН

Резюме

Во многих языках грамматические времена иногда употребляются одно вместо другого.

В древнеармянском языке глаголы настоящего времени употребляются вместо прошедшего (историческое настоящее), а чаще всего они заменяют будущее время. В системе прошедших времен особенно выделяется употребление имперфекта в значении прошедшего совершенного.

Из будущих времен сравнительно широкие сферы второстепенного употребления имеет первое будущее. Оно особенно часто функционирует в значении настоящего времени индикатива.